46 Աստված ողորմած, ինձի ողորմե,

1. Աստված ողորմած, ինձի ողորմե,
Անհուն գթությամբդ իմ մեղքս քավե,
Ամեն հանցանքես լվա՛, զիս մաքրե՛
Եվ իմ մեղքերես, ո՛վ Տեր, զիս սրբե՛:

2. Քանզի հանցանքներս հայտնի են ինձի,
Մեղքս ալ միշտ աչքիս առջև կկայնի,
Միայն Քեզի դեմ ես մեղանչեցի
Ու մեծ չարություն առջևդ գործեցի:

3. Մաքրե՛ արյունովդ, որ ես սրբանամ,
Ձյունեն ավելի ճերմակ ես ըլլամ,
Ամեն մեղքերես Դուն զիս ազատե,
Մխիթարությամբդ ուրախ զիս ըրե:

4. Ո՛վ Տեր, ներսիդիս սուրբ սիրտ ստեղծե,
Ինձի նորոգված հոգի մը շնորհե,
Զիս Քու երեսեդ բնավ մի՛ ձգեր
Ու Քու Սուրբ Հոգիդ ինծմե մի՛ առներ:

5. Քանզի, ո՛վ Տեր, Դուն զոհեր չես կամիր
Եվ ողջակեզներ բնավ չես հավնիր,
Տերոջ հավնած զոհն կոտրած հոգին է,
Խոնարհ սրտին սերն Անոր հաճոյ է: